ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

___ _____ 2020 թվականի N ____ - __

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 152-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական վերահսկողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 11-րդ մասով, «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 13-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշման 1-ին կետով սահմանված 1-ին հավելվածի 4-րդ կետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. ՀՀ պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) մամուլի քարտուղարի պարտականությունների կատարումը վերապահել Ծառայության ղեկավարի օգնական Սեդա Աղբալյանին:

2. Ծառայության տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ նշանակել Ծառայության ղեկավարի օգնական Սեդա Աղբալյանին:

3. Սահմանել, որ ՀՀ պետական վերահսկողական ծառայության մամուլի քարտուղարի պարտականությունները կատարող և տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու հանդիսացող պաշտոնատար անձը՝

1) կազմակերպում է Ծառայության ղեկավարի և Ծառայության այլ պաշտոնատար անձանց մամուլիսասուլիսներ, հարցազրույցներ, ճեպազրույցներ, հայտարարություններ, աշխատանքային հանդիպումներ՝ Ծառայության գործունեության ոլորտին առնչվող հասարակական հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ, պատրաստում է մամուլի հաղորդագրություններ, օրվա մամուլի տեսությունը.

2) ապահովում է, ըստ անհրաժեշտության, մամուլի հաղորդագրությունների պատրաստումը և տարածումը, իր իրավասության շրջանակներում հանդես է գալիս պարզաբանումներով և հայտարարություններով.

3) ներկայացնում է առաջարկություններ զանգվածային լրատվության միջոցներով ելույթներում, մշտական թեմատիկ խորագրերում, հեռուստառադիոհաղորդումներում Ծառայության պաշտոնատար անձանց մասնակցության վերաբերյալ և ապահովում է դրանց կատարումը.

4) ապահովում է վերլուծական, վիճակագրական և այլ նյութերի համակարգված արխիվացման, տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում տեսանյութերի պատրաստման և տեղեկագրերի թողարկման աշխատանքները.

5) ապահովում է Ծառայության պաշտոնական կայքէջի տեղեկատվական սպասարկումը.

6) կազմակերպում և անցկացնում է Ծառայությունում լրագրողների հավատարմագրումը.

7) ապահովում է հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը.

8) ապահովում է լրատվական դաշտի մշտադիտարկման աշխատանքները.

9) սոցիալական կայքերում վարում է Ծառայության էջերը.

10) այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանում է մամուլի խոսնակի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.

11) ստորագրում է մամուլի խոսնակի անունից զանգվածային լրատվության միջոցների հետ կապված պատրաստվող փաստաթղթերը.

12) Ծառայության ղեկավարին, ըստ անհրաժեշտության, ներկայացնում է առաջարկություններ՝ աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական

հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր կազմավորելու համար.

13) անհրաժեշտության դեպքում ներկայացնում է մամուլի խոսնակի աշխատանքային ծրագիրը.

14) Ծառայության ղեկավարի հանձնարարությամբ կատարում է քաղաքացիների ընդունելություն.

15) ապահովում է տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը.

16) տեղեկություն փնտրողին մատչելի ձևով բացատրում է տեղեկության տրամադրման կարգը, պայմանները և ձևերը.

17) մշակում է ստացված հարցումների վիճակագրական և ամփոփ տվյալները:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության ղեկավարի 2019 թվականի սեպտեմբերի 20-ի «Սեդա Աղբալյանին ՀՀ պետական վերահսկողական ծառայության մամուլի քարտուղարի պարտականությունների կատարումը վերապահելու և տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ նշանակելու մասին» N 152-Ա հրամանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

2/25/2020

X

ԱՐԳԻՇՏԻ ՔՅԱՐԱՄՅԱՆ

Signed by: KYARAMYAN ARGISHTI 3205910850

Ա. ՔՅԱՐԱՄՅԱՆ